

ԿԱՐԾԻՔ

Աննա Արտավազդի Գրիգորյանի «Philadelphus L. ցեղի ներկայացուցիչների ներմուծումն ու կլիմայավարժեցումը ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում» ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Գ.00.05. «բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Բնակավայրերում՝ մասնավորապես քաղաքներում, նպաստավոր էկոլոգիական պայմաններ ապահովելու և մարդկանց գեղագիտական բավականություն հաղորդելու համատեքստում չափազանց կարևոր է կանաչապատման մեջ օգտագործվող ծառերի ու թփերի ճիշտ ընտրությունը, որն առաջին հերթին իրականացվում է բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում, բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման ճանապարհով: Այս տեսանկյունից գրախոսվող ատենախոսական աշխատանքը արժեքավոր է և արդիական, քանի որ քաղաքային կանաչապատման մեջ տարբեր տիպի կանաչ տնկարկների ստեղծման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում գործ ունենալ բազմաքանակ տերևավոր ու մշտադալար թփատեսակների հետ: Ինչքան բազմազան լինեն թփատեսակները հաբիթուով, տերևների, ծաղիկների ձևով, գույնով, ծաղկման ժամկետներով ու երկարատևությամբ, այնքան հեշտ կլիմայարտիզագործի, դիզայների համար գեղարվեստական կոմպոզիցիաների ստեղծումը և կանաչապատման իրականացումը: Բնակավայրերի կանաչապատման գործընթացներում երբեմն ծառաթփատեսակները օգտագործվում են առանց հաշվի առնելու դրանց տարածման արեալները, կլիմայական պայմանները և այլն, որն էլ կարճ ժամանակահատվածում ազդում է այդ բույսերի աճման ու զարգացման վրա: Բնակավայրերի կանաչապատման մեջ, որպեսզի բացառվեն օտարածին անհայտ տարբեր տեսակի ծառերի ու թփերի օգտագործումը, անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ բուսաբանական այգիներում ներմուծված, կլիմայավարժեցված ծառաթփատեսակներով: Այս տեսանկյունից կարևորում են գրախոսվող ատենախոսությունը, որի եզրահանգումներն ու առաջարկները կիրառելի կլինեն Հայաստանի տարբեր գոտիներում գտնվող քաղաքների կանաչապատման գործընթացներում:

Գրախոսվող ատենախոսությունը շարադրված է համակարգչային 207 էջերում և բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից 4 ենթագլուխներից, եզրակացությունից, գործնական առաջադրանքներից, 186 անուն գրականության ցանկից, ինչպես նաև 69 ֆոտոնախագծերից բաղկացած 4 հավելվածներից: Ատենախոսությունում գետեղված են 13 տեղեկատվական աղյուսակներ, 8 գրաֆիկական պատկերներ, 3 լուսանկարներ և 2 ֆենոտարապատկերներ:

Տիկին Գրիգորյանը կատարելով ԲՈԿ-ի պահանջները, ներածականում հանգամանալից ներկայացրել է ատենախոսական աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հիմնական դրույթներն ու գիտական նորույթը, ինչպես նաև տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության 1-ին գլխում ատենախոսը հանգամանալից ներկայացրել է սրնգենի ցեղի ուսումնասիրման պատմությունը, բուսաաշխարհագրական գոտիներում

տարածվածությունը, տաքսոնոմիական բազմազանությունը, սրնգենի ցեղի՝ տարբեր լեզուներով անվանումների ծագումնաբանությունը և սրնգենու տարբեր օրգանների օգտագործումը մշակության տարբեր ոլորտներում: Պարզել է, որ սրնգենու 50-70 տերևաթափ և կիսատերևաթափ տեսակներից 40-ը տարածված են Հյուսիսային Ամերիկայում, 22-ը Չինաստանում, 3-ը Հեռավոր Արևելքում, 2-ական Կենտրոնական Ամերիկայում, Ճապոնիայում, Հիմալայներում, Եվրոպայում և միայն մեկը՝ Կովկասում:

Ատենախոսության 2-րդ գլխում տիկին Գրիգորյանը Philadelphus L. ցեղի տեսակային կազմի ճշգրտման համար 2020-2025 թվականների ընթացքում ստացիոնար և կիսաստացիոնար պայմաններում ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում ներմուծված սերմերից աճեցված 15 տաքսոն սրնգենիների հետազոտությունների, ուսումնասիրությունների արդյունքում պարզել է դրանց կլիմայավարժեցման աստիճանը, իրականացրել է ՀՀ ԳԱԱ Երևանի բուսաբանական այգում, Սևանի ու Վանաձորի բաժանմունքներում, Իջևանի դենդրոպարկում և Հայաստանի հյուսիս արևելյան անտառներում հանդիպող տեղական ծագման սրնգենու գիտական գույքագրում, որի արդյունքում որոշվել է տեսակային կազմը, հարմարվողականությունը, կատարվել է բույսերի վարքագծի ուսումնասիրություն:

Ատենախոսության 3-րդ գլխում ատենախոսը ներկայացնում է ՀՀ բուսաբանական այգիների և Իջևանի դենդրոպարկի հավաքածուներում վերջին հարյուրամյակում ներմուծված Philadelphus L. ցեղի շուրջ 40 ներկայացուցիչների փորձարկման, աճման ու զարգացման դինամիկան, ըստ որի ներկայումս նշված հավաքածուներում պահպանվել են ընդամենը 15 ներկայացուցիչներ:

Ատենախոսության 4-րդ գլխում ատենախոսը, օգտվելով հնետաքսաբանական հետազոտություններից և իր վերլուծության արդյունքներից, հիմնավորել է կովկասյան սրնգենու ռելիկտայնությունը, ըստ որի կովկասյան սրնգենին վաղ անցյալում Հայաստանում զբաղեցրել է ավելի ընդարձակ տարածքներ: Ատենախոսության այս գլխում ներկայացվել է նաև Հայաստանի դենդրոֆլորայում, տարբեր գիտնականների կողմից կովկասյան սրնգենու հայտնաբերման և ծագումնաբանության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն:

Ատենախոսության 5-րդ գլուխը նվիրված է ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում ներմուծված տարբեր տեսակի սրնգենիների աճման ու զարգացման առանձնահատկություններին: Քանի որ վերջինս ուղիղ կապ ունի տարածաշրջանային կլիմայական պայմանների հետ, ուստի ատենախոսը համապատասխան գրաֆիկական պատկերներով հաստատում է դա յուրաքանչյուր այգու, դենդրոպարկի համար: Բացի դրանցից այս բաժնում ատենախոսը ներկայացրել է նաև սրնգենի ցեղի հավաքածուներում առկա տեսակների բազմացման եղանակները, ինչպես սերմերով, այնպես էլ կտրոնավորմամբ: Ատենախոսը՝ պայմանավորված սրնգենի ցեղի տեսակների ու կուլտիվարների ներմուծման հայաստանյան օջախների բնակլիմայական պայմանների առանձնահատկություններով, կարողացել է ճիշտ գնահատել և ներկայացնել դրանց կլիմայավարժեցման ամբողջ գործընթացը, որը

պարզ երևում է թիվ 11,12 աղյուսակներում և սույն գլխում ներառված 2 ֆենտարապատկերներում:

Ատենախոսության վերջին 6-րդ գլխի թիվ 13-րդ աղյուսակում ատենախոսը հաջողությամբ ներկայացնում է Philadelphus L. ցեղի ներկայացուցիչների օգտագործման հեռանկարները, ՀՀ տարբեր կլիմայական գոտիներում գտնվող քաղաքների տարբեր տիպի ու կատեգորիայի կանաչ տնկարկներում, որը լիովին ընդունելի է, բացառությամբ փողոցային տնկարկների, եթե խոսքը առաջին շարքի մասին է: Բացի դրանից, եթե ըստ ատենախոսի սրնգենին ունի ալերգիկ խնդիրներ և ցածր գազապաշտպանություն, ուստի ըստ իս դրանց կիրառումը փողոցային տնկարկներում ռիսկային է և սահմանափակ կիրառելի:

Եզրակացությունները, գործնական առաջարկները հավաստի են և բխում են ատենախոսության հիմնական դրույթներից: Ատենախոսության թեմայով հրատարակված 7 գիտական հոդվածները արտահայտում են աշխատանքի հիմնական դրույթները:

Ատենախոսական աշխատանքը գերծ չէ որոշակի անճշտություններից ու թերություններից:

1. Չնայած գրագետ խմբագրմանը, ատենախոսության գլուխներում նկատելի են կրկնվող, երբեմն անհրաժեշտություն չունեցող չկապակցված շարադրանքներ, օրինակ՝ 6-րդ գլխում նույն միտքը, (հարմարողականություն, կլիմայավարժեցում և այլն) կրկնվում է նաև նախորդ գլուխներում, որի անհրաժեշտությունը չկա:

2. Ատենախոսության 3-րդ գլխում, որը վերաբերվում է Philadelphus L. ցեղի տեսակային բազմազանությանը և էկոլոգիական առանձնահատկություններին, տեղին չէ սրնգենու ներկայացուցիչների տնտեսական նշանակության և նկարագրի մեկնաբանումը:

3. Ատենախոսության 4-րդ գլխում, որը կոնկրետ վերաբերվում է կովկասյան սրնգենուն, ծավալուն ներկայացվում են նաև այլ ցեղի ռելիկներ:

4. Ատենախոսության 108-րդ էջում ներկայացված «Կանաչ տնկարկներում ճիշտ ընտրված տեսականին նորմալ աճի և զարգացման գրավականը է» չի արտահայտում նախադասության միտքը:

5. Սրնգենու բազմազան եղանակներից, որն՝ է առաջնայինը և ինչու՞:

6. Սրնգենու վեգետատիվ բազմացումը՝ աշնանային կամ գարնանային կտրոնավորմամբ փորձարկվել է, թե՞ ոչ:

7. Ներմուծված սրնգենիների ֆենտարապատկերում ինչու՞ տեսակները, հիբրիդները և կուլտիվարները չեն դասավորված ըստ ծաղկման ժամկետների:

Ընդհանուր առմամբ Աննա Գրիգորյանի կողմից ներկայացված «Philadelphus L. ցեղի ներկայացուցիչների ներմուծումն ու կլիմայավարժեցումը ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում» ատենախոսական աշխատանքը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ Գ.00.05. «բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ: -

Պաշտոնական ընդդիմախոս

Երևանի քաղաքապետարանի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի գլխավոր դեմոկրատ,

Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա. Գրիգորյան

Ա. Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ

«ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կադրերի բաժնի պետ՝



Լ. Գևորգյան

26.05.2026թ.